ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է «Սառնարանային շենքեր և շինություններ» ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-22/10 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2022 թվականի դեկտեմբերի 27-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-22/10 գնման պայմանագրում 2023 թվականի նոյեմբերի 17-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N1	ՀՀ կառավարության 09.11.2023թ. N 1936-Ն որոշումը
Փոփոխության նկարագրություն	N **ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-22/10** պայմանագրի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը լրացնել նոր վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 7.5 և 7.14 կետեր:

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

27.12.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-22/10 գնման պայմանագրի

ք. Երևան 17. 11. 2023թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Գյուլխասյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 09.11.2023թ. N 1936-Ն որոշումը և «Սառնարանային շենքեր և շինություններ» ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 27.12.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-22/10 պետական գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019099
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական
կենտրոն» ԲԲԸ
ք. Երևան, Ա. Ահարոնյան 3
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930046300600100
ՀՎՀՀ 00007335

Գլխավոր տնօրեն՝

_____ Ա. Գյուլխասյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
27.12.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-22/10 գնման պայմանագրի
17.11. 2023թ. կնքված N 2 համաձայնագրի

<<Հավելված N 2
27.12.2022թ. կնքված
N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-22/10 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200-576	«Սառնարանային շենքեր և շինություններ» ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանքներ	-	-	-	-	-	-	3 000 000	3 000 000	3 000 000	3 000 000	5 950 000	5 950 000	5 950 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով։>>։*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019099
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ՝
«Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» ԲԲԸ
ք. Երևան, Ա. Ահարոնյան 3
«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930046300600100
ՀՎՀՀ 00007335

Գլխավոր տնօրեն՝

_____ Ա. Գյուլխասյան
(ստորագրություն)
Կ.Տ.